

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒԲԵՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ  
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Վարդան Բաբկենի Բոստանջյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Աննա Լևոնի Ասլանյան

տնտեսագիտության թեկնածու

Արսեն Վահագնի Բազիկյան

**Առաջատար կազմակերպություն՝**

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2016 թ. մայիսի 26-ին՝ ժամը 14<sup>00</sup> -ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ –ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, 0025, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016 թ. ապրիլի 25-ին:

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ս. Ա. Գևորգյան

## ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*Հեղափոխության արդիականությունը:* ՀՀ ֆինանսական համակարգի ձևավորման և զարգացման գործում շատ կարևոր է կայուն բանկային համակարգի և արդյունավետ գործող առևտրային բանկերի առկայությունը: Բանկային համակարգի կայունությունն ու արդյունավետ գործունեության ծավալումն ուղղակիորեն կախված են բանկերում ներդրված ֆինանսական հսկողության համակարգերի և մեխանիզմների արդյունավետությունից:

2007-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց բանկային համակարգում առաջացած մի շարք հիմնախնդիրներ: ՀՀ բանկային համակարգում հարաբերությունների կարգավորման համար մինչ այդ ձևավորված մոտեցումներն ու գործիքները բավարար չեղան կանխարգելելու ֆինանսատնտեսական ճգնաժամը, որն իր հերթին ֆինանսական հսկողության իրականացման և ռիսկերի կառավարման նոր ստանդարտների և մեխանիզմների մշակման պատճառ դարձավ: Բանկերի ներքին ֆինանսական հսկողության համակարգում առկա բացթողումները ստիպեցին նորովի անդրադառնալ առևտրային բանկերում «հսկողություն» տնտեսական կատեգորիային՝ շեշտադրում կատարելով ֆինանսական հսկողության հիմնախնդիրների և դրա իրականացման արդյունավետ ուղիների բացահայտման վրա: Այնուհայտ է, որ բանկերին բնորոշ ռիսկերի արդյունավետ կառավարման գործում էական է դրանցում ներդրված հսկողության համակարգերի դերը: Այն փաստը, որ ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 90 տոկոսը բաժին է ընկնում առևտրային բանկերին, վկայում է ՀՀ ֆինանսական համակարգում բանկերի առանցքային դերակատարության մասին: Այդ առումով բանկերում անարդյունավետ կամ թերի գործող ֆինանսական հսկողության համակարգերը ռիսկային են ողջ ֆինանսական համակարգի համար, որն էլ իր հերթին մեծացնում է հանրապետության տնտեսության խոցելիությունը: Ուստի խիստ կարևոր է բանկային համակարգում արդյունավետ ֆինանսական հսկողության համակարգի ձևավորումը, որը ռիսկերի բացահայտման և արդյունավետ կառավարման, ինչպես նաև դրանց հետագա առաջացման կանխարգելման կարևորագույն պայման է:

Աշխատանքում ուսումնասիրվել են բանկային համակարգում ֆինանսական հսկողության համակարգի ձևավորման և դրա գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

*Հեղափոխության նպատակը և խնդիրները:* Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել ֆինանսական հսկողության իրականացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում և մշակել դրանց լուծման, ինչպես նաև ֆինանսական հսկողության արդյունավետության բարձրացման մեխանիզմներ և ուղիներ: Այս նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգում իրականացվող ֆինանսական հսկողության առանձնահատկությունները և այդ գործընթացի կարգավորման օրենսդրական հիմքերը, հետազոտել բանկային համակարգում ֆինանսական հսկողության իրականացման և կարգավորման միջազգային փորձը:

- Հիմնավորել բանկային համակարգում առկա ռիսկերի կառավարման գործընթացում արդյունավետ հսկողության իրականացման կարևորությունը:

- Վերլուծել ՀՀ բանկային համակարգում ֆինանսական հսկողության ներկա վիճակը և հնարավոր զարգացումները, բացահայտել առևտրային բանկերում ֆինանսական հսկողության կազմակերպման և իրականացման խնդիրները և մշակել մոտեցումներ ու մեխանիզմներ դրանց լուծման ուղղությամբ:

- Գնահատել առևտրային բանկերում՝ հսկողության իրականացման գործընթացում, ՀՀ կենտրոնական բանկի դերը և առաջարկել դրա մեծացման ուղիներ, հիմնավորել վերահսկողության նոր մոտեցումների անհրաժեշտությունը և մշակել բանկային համակարգում արդյունավետ հսկողական համակարգերի ձևավորման ուղղությունները:

*Հետազոտության առարկան և օբյեկտը:* Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը ՀՀ բանկային համակարգը և առևտրային բանկերն են, իսկ առարկան՝ բանկային համակարգերում ֆինանսական հսկողության կազմակերպման և իրականացման գործընթացի կատարելագործման տեսական, մեթոդական և օրենսդրաիրավական հիմնադրույթների, այդ ոլորտում առկա միջազգային փորձի, ազգային տնտեսության առանձնահատկությունների, ինչպես նաև ֆինանսական հսկողության համակարգում առկա հիմնախնդիրների ամբողջությունը:

*Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը և տեղեկատվության ապահովումը:* Ատենախոսության համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից հրատարակված հետազոտական աշխատությունները և վերլուծությունները, ՀՀ և արտասահմանյան հետազոտողների գիտական աշխատանքները և զեկուցումները, ինչպես նաև բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտերը:

Աշխատանքի համար որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել ՀՀ և այլ երկրների կենտրոնական բանկերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հրապարակված վիճակագրական և վերլուծական հաշվետվությունները, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունները:

Աշխատանքի ընթացքում կիրառվել են մաթեմատիկական և վիճակագրական, համեմատական և համակարգային վերլուծության մեթոդներ, ինչպես նաև ուսումնասիրվող երևույթների և գործընթացների՝ գծապատկերների միջոցով մեկնաբանման մեթոդները:

*Հեղազոտության գիտական նորույթը:*

- Մշակվել է արտարժույթային ճգնաժամերի նախնական զգուշացման տեղեկատվական համակարգ, որը առաջարկված իրավիճակային մակրո սթրես թեստավորման մոդելի ներդրմամբ թույլ կտա կանխատեսել արտարժույթային ճգնաժամերը՝ նվազեցնելով բանկի՝ դրանց արդյունքում հավանական ֆինանսական կորուստներ կրելու ռիսկերը ու գնահատել արտարժույթային տատանումների ուղղակի և անուղղակի ազդեցությունները բանկի գործունեության վրա:

- Հաշվի առնելով առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման արդյունավետության անկումը և շուկայական փոխարժեքների տատանումներին բանկերի դիմակայության ցածր աստիճանը՝ առաջարկվել է օրենսդրորեն սահմանել կապիտալի համարժեքության պահպանման բուֆեր, բանկի՝ կապիտալի բուֆերի մակարդակի ապահովման ողջամիտ ժամանակահատված, ինչպես նաև եկամուտների բաշխումը զսպող և կարգավորող դրույթներ՝ ՀՀ բանկային համակարգում կապիտալի համարժեքության մակարդակի շարունակական նվազման հիմնախնդրի լուծման համար:

- Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածության աստիճանից կախված իրացվելիության ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվել է կարգավորմանն ուղղված տնտեսական նորմատիվները փոխարինել Բազելյան համաձայնագրով սահմանված իրացվելիության կարգավորման ստանդարտով, ինչը թույլ կտա ռիսկերի զսպման արդյունավետ մեխանիզմների ներդրմամբ ապահովել բանկերում իրավելիության անհրաժեշտ մակարդակ:

*Հեղազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:* Հետազոտության ընթացքում իրականացված վերլուծությունները, ուսումնասիրությունները և գրանցված փաստացի արդյունքները, աշխատանքի եզրահանգումները կարող են օգտագործվել ՀՀ առևտրային բանկերում՝ ֆինանսական հսկողության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով: Աշխատանքի գիտական եզրահանգումները կարող են կիրառվել ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից՝ առևտրային բանկերում ֆինանսական հսկողության համակարգերի համար նոր և առավել արդյունավետ ստանդարտների և մեխանիզմների մշակման նպատակով:

*Հեղազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:* Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակվել են հեղինակի վեց գիտական հոդվածներում, քննարկվել Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնի նիստերում և ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական հսկողության բաժանմունքների մասնագետների հետ թեմատիկ քննարկումներում:

*Արենախոսության կառուցվածքը և ծավալը:* Ատենախոսության կառուցվածքը և ծավալը պայմանավորված են առաջադրված նպատակներով, խնդիրներով և ստացված արդյունքներով: Ատենախոսության ծավալը 119 մեքենագիր էջ է: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը պարունակում է 37 գծապատկեր, 21 աղյուսակ:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

*Արենախոսության ներածության մեջ* հիմնավորել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, տրվել են տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են ատենախոսության գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

*Արենախոսության առաջին՝* «Ֆինանսական հսկողության տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացված են ֆինանսական հսկողության էությունն ու նպատակները, միջազգային պրակտիկայում ֆինանսական հսկողության իրականացման մեթոդներն ու սկզբունքները, ինչպես նաև առևտրային բանկերում ֆինանսական հսկողության իրականացման առանձնահատկությունները: Բանկային համակարգում ֆինանսական հսկողությունը համալիր միջոցառումների (գործառույթների) ամբողջություն է՝ ուղղված բանկի գործունեության՝ բանկային օրենսդրությանը համապատասխանության ապահովմանը, իրականացվող գործառույթների արդյունավետության բարձրացմանը, ռիսկերի արդյունավետ կառավարմանը<sup>1</sup>:

Ֆինանսական հսկողության կազմակերպումը պահանջում է բանկում հետևյալ 2 երևույթների առկայություն՝

*Անկախություն.* ֆինանսական հսկողություն իրականացնող մարմինը նախ և առաջ պետք է լինի անկախ:

Ռիսկը<sup>2</sup> ֆինանսական հսկողության անբաժանելի մասն է, բնութագրում է այս կամ այն իրադարձության (երևույթի) ի հայտ գալու հավանականությունը: Բանկային ռիսկերի առկայությունը բխում է բանկային գործի առանձնահատկություններից, և ֆինանսական հսկողության գլխավոր նպատակներից մեկը դրանց բացահայտումն ու ֆինանսական հնարավոր կորուստներից բանկի պաշտպանվածության ապահովումն է:

Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում բացահայտվեցին ֆինանսական հսկողության համակարգում առկա


<sup>1</sup> Սահմանումը տրվել է հեղինակի կողմից՝ որպես «ֆինանսական հսկողություն» կատեգորիայի՝ տնտեսագիտության տեսության մեջ տրված սահմանումների ընդհանրացում:

<sup>2</sup> Ռիսկը ծագել է արաբերեն «risque» բառից, որը մեկնաբանվում է որպես անցանկալի իրադարձության, վնասի ի հայտ գալու հավանականություն:

բացթողումները, թերությունները, ռիսկերը: ԿԲ կարգավորման և հսկողության իրականացման մեխանիզմներում բացահայտված թերությունները մատնանշվել և խորությամբ ուսումնասիրվել են աշխատանքում, ինչպես նաև արվել են դրանց լուծման գործուն առաջարկներ:

*Արենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական հսկողության հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» գլխում* ներկայացված են ՀՀ բանկային համակարգի զարգացման և դրանում իրականացվող ֆինանսական հսկողության առանձնահատկությունները:

2006-2014 թթ. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների ծավալը տարեկան միջինը աճել է 26.7 %-ով: Նույն ժամանակահատվածում պարտավորությունների ընդհանուր ծավալն ավելացել է տարեկան միջինը 28.5 %-ով, իսկ հաշվեկշռային ընդհանուր կապիտալի ծավալը՝ տարեկան միջինը 19.2 %-ով: Այստեղ դիտարկվում է հաշվեկշռային բաղադրիչների անհավասարաչափ աճ, որով պայմանավորվում է բանկային ռիսկերի ավելացումը այլ հավասար պայմաններում: Դա է փաստում վերջին տարիների ընթացքում բանկային համակարգի Ն11 նորմատիվի նվազող դինամիկան (ընդհուպ մինչև 14% (տե՛ս գծապատկեր 1)), որը գերազանցում է կենտրոնական բանկի կողմից սահմանված 12 % նվազագույն շեմը, սակայն ԿԲ սթրես թեստավորման արդյունքները վատթարացել են՝ նախորդ տարիների հետ համեմատած:



Գծապատկեր 1. Բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվի դինամիկան (1997-2014 թթ.)<sup>3</sup>

Սրան հիմնականում նպաստել է բանկերում վարկային պորտֆելի որակի անկումը: Այն պայմանավորում է կապիտալի համարժեքության նորմատիվի անկումը: Վարկային ռիսկը բանկային համակարգի կարևորագույն ֆինանսական ռիսկերից է, որին ենթարկվում է բանկային ակտիվների գերակշիռ մասը: 2014 թ. չաշխատող վարկերը և դեբիտորական պարտքերը արձանագրել են գրեթե կրկնակի աճ (86.2 տոկոսային կետ) այն դեպքում, երբ ընդհանուր

<sup>3</sup> Գծապատկեր 1-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրերը:

վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 20.3 տոկոսային կետով: 2014 թ. վերջին չաշխատող ակտիվների մասնաբաժինը ընդհանուր ակտիվներում կազմել է 6.4. սա գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 2.2 տոկոսային կետով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի կշիռը ընդհանուր պորտֆելում (2013-2014 թթ.)<sup>4</sup>

	2013 թ.	2014 թ.	Աճի տեմպ, %
Չաշխատող վարկեր և դեբիտորական պարտքեր (մլրդ դրամ)	81.4	151.5	86.2
Ստանդարտ վարկեր և դեբիտորական պարտքեր (մլրդ դրամ)	1832.1	2204.9	20.30
Ընդամենը վարկեր և դեբիտորական պարտքեր (մլրդ դրամ)	1913.5	2356.4	23.10
Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր կշիռը (%)	4.3	6.4	2.2

Ռիսկի ամենամեծ աճ արձանագրվել են ոչ ստանդարտ և հսկվող վարկային դասերի մեջ՝ համապատասխանաբար 0.8 և 0.9 տոկոսային կետ, որը նշանակում է՝ վարկային պորտֆելի որակի վատթարացմանը հիմնականում նպաստել են նոր վարկերի չաշխատող դասակարգվելը: (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2


Բանկային համակարգի ակտիվների ռիսկայնության դասի փոփոխությունը վերջին երկու տարիներին

Տարեթիվ	Ստանդարտ (%)	Հսկվող (%)	Ոչ Ստանդարտ (%)	Կասկածելի (%)
2014թ.	93.4	3.10	1.90	1.40
2013թ.	95.7	2.20	1.10	1.00

2010-2015 թթ. բանկային համակարգում մասհանումները գերազանցել են հետադարձումները ընդհանուր 127 մլրդ դրամով կամ միջինը տարեկան 25.4 մլրդ ՀՀ դրամով, որը կազմում է տվյալ ժամանակահատվածի միջին կապիտալի 6 տոկոսը (տե՛ս գծապատկեր 2): Սա բանկային համակարգի համար չափազանց մեծ թիվ է: Սա ևս մեկ անգամ վկայում է վարկային պորտֆելի որակի անկման մասին, որն արդյունք է վերջին տարիներին ցուցաբերված ագրեսիվ վարկավորման:

<sup>4</sup> Աղյուսակներ 1-ի և 2-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:





Գծապատկեր 2. Բանկային համակարգի մասնաձևերը և հետադարձումները 2010-2015 թթ<sup>5</sup>. (մլրդ դրամ)

Այսպիսով, կապիտալի համարժեքության ապահովման մեջ ՀՀ բանկային համակարգում նկատվում է կապիտալի համարժեքության մակարդակի շարունակական նվազման միտում: Դա մի կողմից պայմանավորված է ՀՀ առևտրային բանկերի կողմից վարկային ռիսկի կառավարման արդյունավետության անկմամբ, մյուս կողմից՝ շուկայական փոխարժեքների տատանման արդյունքում բանկերի կողմից շարունակական վնասներ կրելու հանգամանքով: Նկարագրված ռիսկերից խուսափելու միջազգային փորձը վկայում է՝ անհրաժեշտ է, որ բանկերը ապահովեն նորմատիվային կապիտալից ավելի բարձր կապիտալի համարժեքության մակարդակ, որի մեծությունը ճգնաժամային պայմաններում պետք է ապահովի բանկի ֆինանսական կայունությունը<sup>6</sup>:

Այս հիմնախնդրի լուծման համար կենտրոնական բանկին առաջարկվում է օրենսդրորեն՝


- սահմանել կապիտալի համարժեքության պահպանման բուֆեր.
- սահմանափակել շահութաբաժինների, լրավճարների,

պարգևավճարների իրականացումը, երբ բանկը հատում է հակացիկլային բուֆերը (տե՛ս գծապատկեր 3):

Այսպիսով, նշված առաջարկության կիրառման պայմաններում բանկերը կարող են իրենց ծավալված գործունեության արդյունքում սպառել կապիտալի բուֆերը և աշխատել կապիտալի նորմատիվային մակարդակի և սահմանված բուֆերի միջակայքում, սակայն դա չի կրի շարունակական բնույթ, քանի որ կապիտալի բուֆերի սահմանման նպատակն է սովորական պայմաններում ապահովել կապիտալի այնպիսի մակարդակ, որը սթրեսային պայմաններում չի նվազի նորմատիվային մակարդակից ցածր՝ ապահովելով բանկի կայուն ֆինանսական վիճակը:

<sup>5</sup> Գծապատկերներ 2-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:


<sup>6</sup> St՝u Basle Committee on Banking Supervision. Peer review of supervisory authorities. Implementation of stress testing principles. 2012, էջ 4, Basle Committee on Banking Supervision. Countercyclical capital buffer proposal. 2010, էջ 4:



Գծապատկեր 3. Բանկի կապիտալի համարժեքության ապահովման երկմակարդակ համակարգը<sup>7</sup>

Արենախոսության երրորդ՝ «ՀՀ բանկային համակարգում ֆինանսական հսկողության արդյունավետության բարձրացման ուղիները» գլխում ներկայացվել են Հանրապետության բանկային համակարգում վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի կառավարման առանձնահատկությունները և առաջարկվել դրանց արդյունավետության բարձրացման նոր մեխանիզմներ և մոտեցումներ:

ՀՀ բանկային համակարգն առավել զգայուն է արտարժույթի փոխարժեքի տատանումների նկատմամբ, որը պայմանավորված է մի քանի հանգամանքով: Նախ, արտարժույթային բաց դիրք ունենալու պարագայում առանձին բանկեր դիմում են փոխարժեքի անբարենպաստ տատանումների արդյունքում վնասներ կրելու ռիսկի: Երկրորդ, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգին բնորոշ է դոլարիզացման բարձր մակարդակ:



Գծապատկեր 4. Ռեզիդենտ ձեռնարկություններին տրամադրված վարկերի կառուցվածքը՝ ըստ արժույթի (2000-2015 թթ)<sup>8</sup>

2015 թ. հունիսին 2008 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ առևտրային բանկերի՝ ձեռնարկություններին արտարժույթով

<sup>7</sup> Գծապատկեր 3-ը կառուցվել է հեղինակի կողմից:

<sup>8</sup> Գծապատկեր 4-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:

տրամադրած վարկերը շեշտակի աճել են շուրջ 7.4 անգամ (տե՛ս գծապատկեր 4): Դոլարիզացիայի բարձր մակարդակը բանկերին արտաժողային տատանումների նկատմամբ խոցելի է դարձնում նաև անուղղակիորեն: 2015 թվականից սկսած՝ վարկային պորտֆելի որակի կտրուկ նվազումը պայմանավորված է ՀՀ դրամի՝ արտարժույթի նկատմամբ արժեզրկմամբ 20-25 տոկոսային կետով: Այս հանգամանքը ձեռնարկություններում առաջացրեց վճարունակության երկու հիմնախնդիր:

1. ՀՀ դրամով արտահայտված վարկերի մարումների գումարները մեծացան:

2. արտարժույթի թանկացման հետևանքով թանկացավ ներմուծումը:

Բնականաբար, այն չէր կարող իր բացասական ազդեցությունը չունենալ վարկային պորտֆելի որակի վրա: 2014 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների արտարժույթային ճգնաժամն անմիջապես իր ազդեցությունն ունեցավ բանկերի վարկային պորտֆելի որակի վրա: 2015 թ. հունվարին չաշխատող վարկերի տեսակարար կշիռը մեծացավ 1,4 տոկոսային կետով, որի արդյունքում չաշխատող վարկերի կշիռը ընդհանուր վարկերում կազմեց 8,5 տոկոս և շարունակեց բարձրանալ հաջորդող ամիսներին ընդհուպ մինչև 9.2 տոկոս, որը բավական մեծ ցուցանիշ է, եթե համեմատենք միջազգային պրակտիկայում ընդունված 3-4 տոկոս ընդունելի մակարդակի հետ: Պատմությունը կրկնվեց՝ ցույց տալով, որ ո՛չ 2009 թվականին, ո՛չ 2014 թ. վերջում արտարժույթի սթրեսային տատանումների բացասական ազդեցությունը բանկային համակարգի կողմից չկանխարգելվեց:

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգում առկա են հետևյալ երկու հիմնախնդիրները.

1) ՀՀ բանկային համակարգը արտարժույթային բաց դիրքի վերագնահատման արդյունքում տարիներ շարունակ վնասներ է կրել:

2) բանկային համակարգը դժվար է դիմակայում արտարժույթային տատանումների բացասական ազդեցությանը:

Այս հիմնախնդիրների կառավարման արդյունավետության բարձրացման համար առաջարկվում է բանկերում ներդնել արտարժույթային ճգնաժամների նախնական զգուշացման ցուցիչների համակարգ:

Համակարգը մշակվել է հեղինակի կողմից ՀՀ բանկային համակարգի համար՝ հաշվի առնելով արտարժույթային ճգնաժամի վերջին դրսևորումները ՀՀ բանկային համակարգում:

Նախնական զգուշացման ցուցիչների համակարգ՝ ըստ հետևյալ խմբերի.

- շուկայական ցուցիչներ,
- բանկի ներքին ցուցիչներ,
- հաճախորդների պահվածքի փոփոխության ցուցիչներ:

Բանկերի՝ փակ դիրք զբաղեցնելը կանխատեսվող փոխարժեքային ճգնաժամից առաջ թույլ կտա նրանց ոչ միայն խուսափել փոխարժեքային տատանումների բացասական հետևանքներից, այլև շարունակել եկամուտներ ստանալ սթրեսային իրավիճակներում:

Արտարժությային ռիսկով պայմանավորված վարկային ռիսկի կառավարման բարելավման նպատակով առաջարկվում է բանկերի ֆինանսական հսկողության համակարգում ներդնել ընդհանրական տեղեկատվական համակարգ արտարժությային ռիսկին հակված խոշոր և միջին վարկառուների մասին: Այն պետք է նվազագույնը ներառի ձեռնարկության ներհոսքերի (եկամուտների) և արտահոսքերի (վարկային մարումներ)՝ տարբեր արժույթներով լինելու վերաբերյալ ողջ տեղեկատվությունը: Նվազագույն տեղեկատվության ապահովման ցանկին հնարավոր է ծանոթանալ ատենախոսության մեջ<sup>9</sup>:

Բացի վերոնշյալ տեղեկատվության ապահովումից՝ բանկերին առաջարկվում է իրականացնել իրավիճակային սթրես թեստեր՝ գնահատելու արտարժույթի կտրուկ տատանումների հնարավոր բացասական ազդեցությունը՝ պայմանավորված հիմնական տնտեսական հինգ կատեգորիաներում իրավիճակային փոփոխություններով: Դրանք են՝

1. իրական ՀՆԱ,
2. գործազրկության մակարդակ,
3. բանկային տոկոսադրույք,
4. անշարժ գույքի գների ինդեքս,
5. փոխարժեքի տատանումներ:

Հնարավոր սթրեսային իրավիճակների միջին և խիստ սցենարների նկարագրերը ներկայացված են ատենախոսության մեջ:

Ֆինանսավորման իրացվելիության ռիսկը հանրապետության բանկային համակարգում գնահատելու համար հետազոտվել են վերջին ժամանակաշրջանում համակարգի կողմից ներգրավված ավանդների որակական հատկանիշներն ու որոշակի ժամանակահատվածում արձանագրված փոփոխությունները՝ ուշադրությունը նախ և առաջ կենտրոնացնելով բանկային համակարգում դրսևորվող խոշոր պարտավորությունների կենտրոնացման աստիճանի և մասնաբաժնի վրա<sup>10</sup>:

---

<sup>9</sup> Համակարգը մշակվել է հեղինակի կողմից:

<sup>10</sup> Տե՛ս «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» (հաստատվել է 2008 թ. փետրվարի 26-ի՝ ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 50-Ն որոշմամբ), կանոնակարգ 3:

Հետազոտության ընթացքում իրականացված վերլուծությունները բացահայտում են համակարգի՝ խոշոր պարտավորությունների արտահոսքի նկատմամբ զգայունության մեծացում<sup>11</sup>:

Տարածաշրջանի և Եվրոպայի երկրներում խոշոր պարտատիրոջը բաժին ընկնող ռիսկի կառավարման փորձի ուսումնասիրությունները բացահայտել են պարտավորությունների կենտրոնացվածության կարգավորման ընդունված մոտեցում, որի ժամանակ իրականացվում է իրացվելիության ապահովման տարբերակված պահանջների սահմանում՝ կախված բանկի պարտատիրոջ պարտավորությունների կենտրոնացվածությունից և տեսակից: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ-ում առաջնային անհրաժեշտություն է առաջանում վերանայելու ՀՀ ԿԲ կողմից «խոշոր պարտավորություն» ճանաչելու համար սահմանված չափանիշը և ինչպես բանկի, այնպես էլ բանկային համակարգի նկատմամբ խոշոր պարտատիրոջ որակումը: Անհրաժեշտ է ներկայիս իրացվելիության կառավարման նորմատիվները փոխարինել Բազել 3-ով սահմանված իրացվելիության կառավարման ստանդարտով: Այս մեխանիզմի ներդրումից հետո անհրաժեշտություն կառաջանա ԻԾԳ-ի (LCR) հաշվարկման բանաձևում սահմանելու ներգրավված խոշոր պարտավորություններով պայմանավորված հնարավոր արտահոսքի հաշվարկման ավելի խիստ պայմաններ:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում իրացվելիության կարգավորման գործիքակազմը հիմնական տնտեսական նորմատիվներն են: Այնուհանդերձ, վերոնշյալ նորմատիվներն ունեն մի շարք թերություններ.

1. Դրանք բանկի իրացվելիությունը ընդունում են որպես պաշարային հասկացություն, մինչդեռ այն պաշարահոսքային հասկացություն է<sup>12</sup>:

2. Նորմատիվների ներկայիս հաշվարկում կատարվում է ֆինանսավորման իրացվելիության մակարդակի գնահատում՝ բացառելով շուկայական իրացվելիության որևէ գնահատական: Բարձր իրացվելի արժեթղթերը նորմատիվների հաշվարկման ընթացքում ընդգրկվում են իրենց հաշվեկշռային արժեքներով այն դեպքում, երբ նրանց իրական իրացման արժեքները ենթակա են ճշգրտման՝ կախված շուկայի իրացվելիությունից:

3. Անտեսվում է պայմանական պարտավորությունների (արտահաշվեկշռային) հնարավոր օգտագործումից ստեղծվող դրամական ռեսուրսների արտահոսքը և դրա արդյունքում իրացվելիության նվազումը:

Բազել III համաձայնագրով սահմանված ԻԾԳ-ի (LCR) հաշվարկում բարձր իրացվելի ակտիվները կշռվում են տարբերակված զեղչադրույքներով:

<sup>11</sup> Տե՛ս Գևորգյան Հ., Ֆինանսավորման իրացվելիության ռիսկի կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Այլընտրանք» գիտական հանդես, հունվար-մարտ, 2016:

<sup>12</sup> Տե՛ս Drehmann, M. Nikolaou K. Funding liquidity risk: definition and measurement. Bank for International Settlements Working paper No 316. 2010, էջ 3:

$$LCR = \frac{\text{High quality liquid assets}}{\text{Total net liquidity outflows over 30 days}} \geq 100\%$$

$$NSFR = \frac{\text{Available amount of stable funding}}{\text{Required amount of stable funding}} > 100\%$$

Ինչ վերաբերում է Բազելյան համաձայնագրի՝ իրացվելիության երկրորդ ստանդարտին, ապա պետք է նշել, որ զուտ կայուն ֆինանսավորման գործակիցը (NSFR) նպատակ է հետապնդում ապահովելու բանկի երկարաժամկետ հորիզոնում իրացվելիության կառավարման արդյունավետ գնահատական: Ստանդարտի ներդրման նպատակահարմարությունը պայմանավորված է նրանով, որ՝

1. գործակցի հաշվարկում իրացվելիությունը ընդգրկում է ինչպես ֆինանսավորման, այնպես էլ շուկայական իրացվելիության ռիսկերը.
2. ԻԾԳ-ն (LCR) ամբողջությամբ փոխարինում է ներկայումս ներդրված ընթացիկ իրացվելիության նորմատիվին.
3. ստանդարտի ներդրումը նպատակահարմար է տարածաշրջանի երկրների բանկային համակարգերում կիրառվող իրացվելիության կարգավորման և հսկողության մեխանիզմների ու մոտեցումների համահարթեցման համար:

Հանրապետության բանկային համակարգում ներդրված իրացվելիության կարգավորման համակարգի համարժեքության հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ և նպատակային է համակարգի իրացվելիության նորմատիվները փոխարինել Բազելյան համաձայնագրով սահմանված իրացվելիության կարգավորման ստանդարտով (ԻԾԳ և ԶԿՖԳ):

*Արենախոսության եզրակացություններում* ամփոփված են հետազոտության ընթացքում իրականանացված վերլուծությունների հիման վրա գրանցված հիմնական արդյունքները:

1. Կապիտալի համարժեքության ապահովման առումով ՀՀ բանկային համակարգում նկատվում է դրա մակարդակի շարունակական նվազման միտում: Սա պայմանավորված է առևտրային բանկերի՝ վարկային ռիսկի կառավարման ցածր արդյունավետությամբ և շուկայական տատանումների նկատմամբ ճկուն ու արդյունավետ մարտավարության բացակայությամբ: Նման իրավիճակներում կապիտալի ապահովման մարտահրավերին դիմակայելու համար անհրաժեշտ է սահմանափակել բանկերում կատարվող որոշ վճարներ, որոնք հանգեցնում են կապիտալի համարժեքության և իրացվելիության նվազման:

Այս հիմնախնդրի լուծման համար աշխատանքում առաջարկվել է օրենսդրորեն սահմանել՝

- կապիտալի համարժեքության պահպանման բուֆեր,

- կապիտալի բուֆերի մակարդակի ապահովման հիմնավորված ժամանակահատված,

- հակացիկլային բուֆերի հատման դեպքում շահութաբաժինների, լրավճարների, պարգևատրումների և անկարևոր այլ ծախսերի չափավոր իրականացում:

Նշված սահմանափակումների պայմաններում բանկերն իրենց գործունեությունը կարող են իրականացնել կապիտալի նորմատիվային մակարդակի և սահմանված բուֆերի միջակայքում: Բնականաբար, դա չի կարող կրել շարունակական բնույթ, քանի որ կապիտալի բուֆերի սահմանման նպատակն է ապահովել կապիտալի այնպիսի մակարդակ, որը սթրեսային պայմաններում չի դառնա դրա նորմատիվային մակարդակից ցածր՝ երաշխավորելով բանկերի ֆինանսական վիճակի կայունության որոշակի աստիճան:

2. Արտարժույթային ռիսկի կառավարման վերլուծության արդյունքները միանշանակ ցույց են տալիս, որ արտարժույթային բաց դիրքի պայմաններում ՀՀ բանկային համակարգը տարիներ շարունակ կրել է վնասներ: Այս հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև հանրապետությունում արտարժույթային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է բանկերում ներդնել արտարժույթային հնարավոր ճգնաժամերի բացահայտման նախնական զգուշացման ցուցիչների համակարգ: Միջազգային արտարժույթների նկատմամբ ազգային արժույթի կտրուկ արժեզրկման հնարավորությունը բացառելու և այդ երևույթի հետ կապված ռիսկերը զսպելու նպատակով ՀՀ բանկային համակարգի համար մշակվել է միջոցառումների ամբողջական համալիր, որտեղ հաշվի են առնվել հանրապետությունում արտարժույթային ճգնաժամի վերջին երկու փաստացի դրսևորումները: Տնտեսության մեջ փոխարժեքային ճգնաժամի անգամ փոքր հավանականության դեպքում նախնական զգուշացման գործուն մեխանիզմների միջոցով առաջարկվող համալիրը կկանխարգելի ազգային փոխարժեքի կտրուկ արժեզրկման ազդեցությունը հանրապետության բանկային համակարգի վրա և թույլ կտա ոչ միայն խուսափել փոխարժեքային տատանումների բացասական հետևանքներից, այլև նման իրավիճակներում ազդել ինչպես բանկային համակարգի, այնպես էլ տնտեսության կայունության վրա:

3. Արտարժույթային և վարկային ռիսկերի կառավարման վերլուծության, ինչպես նաև դրանց կապի ու առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ բանկային համակարգի կայունության ցածր մակարդակը գլխավորապես պայմանավորված է արտարժույթային տատանումների բացասական ազդեցության հիմնախնդրի առկայությամբ: Սա են վկայում նաև վերջին երկու փոխարժեքային ճգնաժամերը, երբ հանրապետության առևտրային բանկերը կանգնեցին վարկային պորտֆելի որակի կտրուկ վատթարացման հիմնախնդրի առջև: Ակնհայտ է, որ դա առաջին

հերթին բանկային համակարգի վարկային պորտֆելի դոլարիզացման բարձր մակարդակի հետևանք է:

Արտարժությային ռիսկից բխող վարկային ռիսկի կառավարման բարելավման նպատակով անհրաժեշտ է բանկերի ֆինանսական հսկողության համակարգում ներդնել ընդհանրական տեղեկատվական համակարգ արտարժությային ռիսկերին հակված խոշոր և միջին վարկառուների մասին: Այդ համակարգը՝ որպես ֆինանսական հսկողության գործառնության անբաժանելի մաս, պետք է վարկային ռիսկի կառավարման մարմիններին տրամադրի հնարավորինս ամբողջական տեղեկատվություն ընկերության՝ արտարժությային ռիսկին ենթարկվածության վերաբերյալ: Այն պետք է ընդգրկի ընկերությունների՝ տարբեր արժույթներով իրականացվող ներհոսքերի (եկամուտների) և արտահոսքերի (վարկային մարումների) մասին օպերատիվ տեղեկատվություն: Այդպիսի համակարգի գործունակության համար աշխատանքում մշակվել են անհրաժեշտ տեղեկատվության նվազագույն պահանջներ:

4. Վարկային ռիսկի կառավարման տեղեկատվական համակարգի ներդրմանը զուգահեռ բանկերը արտարժույթի կտրուկ տատանումների հնարավոր բացասական ազդեցությունը գնահատելու համար պետք է անցկացնեն մակրո սթրես թեստեր: Դրանք թույլ կտան արժեքավորել տվյալ ռիսկի գոտում հայտնված վարկառուների եկամուտների և վարկային մարումների հարաբերակցության փոփոխությունը փոխարժեքի տատանումների դեպքում:

Իրավիճակային մակրո սթրես թեստավորման համար ատենախոսության մեջ մշակվել է համապատասխան մոդել, որում վարկառուի վճարունակության վրա անուղղակի բացասական ազդեցությունները գնահատելու նպատակով ներառվել են տնտեսական ակտիվության և մակրոտնտեսական ցուցանիշների վրա ներգործող ազդակներ: Հանրապետության առևտրային բանկերում մոդելի ներդրումը թույլ կտա դրանցում էապես բարձրացնել վարկային ռիսկի կառավարման և կապիտալի ու իրացվելիության գործընթացների արդյունավետությունը:

5. Բանկային գործունեության մեջ իրացվելիության ռիսկի դրսևորման հիմնական առանձնահատկություններն էապես մեծացնում և կարևորում են իրացվելիության՝ բանկային այլ ռիսկերի հետ միասնական կառավարման համակարգի անհրաժեշտությունը: Ավելին, ֆինանսավորման և շուկայական իրացվելիության ռիսկերի միջև գոյություն ունեցող հետադարձ կապը և բանկային գործունեության մեջ այլ բանկային ռիսկերի հետ հանդես գալը ուղղակի ազդեցություն են ունենում բանկերի իրացվելիության մակարդակի վրա և մեծացնում դրա հետ կապված ռիսկը: Վերջինիս գնահատման մոտեցումների և դրա առանձնահատկությունների ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ սթրես թեստավորման մոդելը ընդհանուր բանկային համակարգի և առանձին առևտրային բանկերի համար պետք է համարել իրացվելիության ամբողջական և արդյունավետ գնահատման մեթոդ, քանի որ այս մոտեցման պարագայում իրացվելիությունը դիտվում է որպես



պաշարահոսքային կատեգորիա, իսկ մոդելը հիմնվում է հեռանկարային զարգացումների առավել հավանական կանխատեսումների վրա:

6. ՀՀ բանկային համակարգում իրացվելիության կարգավորման իրավանորմատիվային դաշտը դեռևս շարունակում է հիմնված մնալ հանրապետության այսպես կոչված «առանձնահատկություններից» բխող չափորոշիչների վրա: Միևնույն ժամանակ, բանկային գործունեության բավականին բարձր մշակույթ ունեցող երկրներում դրանք անընդհատ կատարելագործվում են, հատկապես հետճգնաժամային շրջանում, երբ Բազել III համաձայնագրով սահմանվեցին իրացվելիության ռիսկի կարգավորման նոր ստանդարտներ և մոտեցումներ: Ավելին, Եվրամիության անդամ երկրների համար Բազել III համաձայնագրի իրացվելիության ստանդարտների կիրառումը դարձել է պարտադիր պահանջ: Մինչդեռ հանրապետության բանկային համակարգում նկատվում է իրացվելիության մակարդակի նվազման միտում: Այն պայմանավորվում է ֆինանսական միջնորդության խորացմամբ և բանկերում բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների տեսակարար կշռի փոքրացմամբ:

Հաշվի առնելով այն փաստը, որ իրացվելիության՝ հանրապետությունում ներկայումս գրանցված ցուցանիշները համադրելի են ձևավորման նմանատիպ փուլում գտնվող երկրներում դիտարկված բանկային համակարգերի իրացվելիության մակարդակներին՝ դրանց նվազման միտումը բացառելու նպատակով աշխատանքում առաջարկվել է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի իրացվելիության կարգավորման ոլորտում ներդնել իրացվելիության կառավարման միջազգայնորեն ընդունված, ստանդարտացված մոտեցումներ:

7. ՀՀ բանկային համակարգի՝ անհետաձգելի լուծում պահանջող հարցերից է շարունակում մնալ պարտավորությունների կենտրոնացվածության բարձր աստիճանի առկայության հիմնախնդիրը: Սրա լուծման նպատակով ատենախոսության մեջ առաջարկվել է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում սահմանել ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածության մակարդակից կախված իրացվելիության մակարդակի ապահովման տարբերակված պահանջներ:

Առաջարկվող մոտեցման դեպքում բանկերից կպահանջվի խոշոր պարտավորությունների դիմաց ապահովել հավելյալ իրացվելի ակտիվներ՝ դրանց հնարավոր արտահոսքի դրսևորման ժամանակ բանկերի զգայունության աստիճանը նվազեցնելու համար:

Առաջարկվող մեխանիզմի գործադրման համար անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ն փոփոխություններ իրականացնի կարգավորման և հսկողության ընթացակարգերում, ինչպես նաև ստեղծվի միասնական տեղեկատվական համակարգ: Վերջինիս միջոցով կվերահսկվեն մեկ ավանդատուի նկատմամբ բանկային համակարգի ունեցած պարտավորությունները. այդ տեղեկատվությունը կտրամադրվի առանձին բանկերի, որոնք պարտավորություն ունեն խոշոր ավանդատու ճանաչված անձանց նկատմամբ:

8. ՀՀ բանկային համակարգում ԿԲ կողմից իրացվելիության հսկողության և կառավարման համար օրենսդրորեն ամրագրված տնտեսական նորմատիվները, որոնք գործարկվել են դեռևս ՀՀ բանկային համակարգի ձևավորման փուլում, ի տարբերություն համաշխարհային բանկային պրակտիկայում ընդունված մոտեցումների, իրացվելիությունը դիտարկում են որպես պաշարային հասկացություն: Ավելին, դրանք չեն ընդգրկում շուկայական իրացվելիության ռիսկը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների (հետհաշվեկշռային հոդվածներ)՝ բանկերի ֆինանսավորման ռիսկերը:

Որպես այս հիմնախնդրի լուծման արդյունավետ մոտեցում՝ աշխատանքում առաջարկվել է հանրապետությունում ներդրված նորմատիվները փոխարինել Բազելյան նոր համաձայնագրով սահմանված իրացվելիության կարգավորման ստանդարտով (ԻԾԳ և ԶԿՖԳ): Այն հնարավորություն կստեղծի ոչ միայն ներդնել իրացվելիության կարգավորման և հսկողության բնագավառում ռիսկերի արդյունավետ կառավարման համարժեք մեխանիզմներ, այլ նաև դրանով ապահովել հանրապետության բանկային հարաբերությունների կարգավորման համակարգի ներդաշնակեցումը միջազգային պրակտիկային:

*Արեճախոսության հիմնական դրույթները* հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Բոստանջյան Վ., Գևորգյան Հ., Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ԲԱԶԵԼ 3-ի ներդրման առանձնահատկությունները, «Այլընտրանք» գիտական հանդես, ապրիլ-հունիս, 2015, էջ 61-66:
2. Բոստանջյան Վ., Գևորգյան Հ., Շուկայական իրացվելիության ռիսկի կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Այլընտրանք» գիտական հանդես, հունվար-մարտ, 2016, էջ 283-290:
3. Գևորգյան Հ., Ֆինանսավորման իրացվելիության ռիսկի կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Այլընտրանք» գիտական հանդես, հունվար-մարտ, 2016, էջ 290-295:
4. Գևորգյան Հ., Ֆինանսական հսկողության հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ» գիտական աշխատանքների ժողովածու, գիրք 7-րդ, 2015, էջ 278-285:
5. Գևորգյան Հ., Կապիտալի համարժեքության պահպանումը որպես արդյունավետ ֆինանսական հսկողության իրականացման գրավական, «Ֆինանսներ և էկոնոմիկա», ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, հ. 1-2 (185-186), հունվար 2016, էջ 25-26:
6. Գևորգյան Հ., Ֆինանսական հսկողության գործընթացի զարգացումը ՀՀ առևտրային բանկերում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, հ. 1-2 (185-186), հունվար 2016, էջ 27-28:

ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОГО КОНТРОЛЯ В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата  
экономических наук по специальности 08.00.03-"Финансы, бухгалтерский учет"

Защита диссертации состоится 26-ого мая 2016 г., в 14<sup>00</sup> на заседании  
специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в  
Армянском государственном экономическом университете. Адресс: 0025, Ереван,  
ул. Налбандяна 128.

**РЕЗЮМЕ**

Актуальность исследования. В формировании и развитии финансовой системы РА очень важно существование стабильной банковской системы и эффективно функционирующих коммерческих банков. Стабильность банковской системы и распространение продуктивной деятельности напрямую зависят от эффективности внедренных в банках систем финансового контроля и механизмов.

Финансово-экономический кризис 2007-2009 годов выявил ряд проблем, возникших в банковской системе. Применяемые до этого подходы и средства для регулирования отношений в банковской системе РА оказались недостаточны для предотвращения финансово-экономического кризиса, что, в свою очередь, привело к разработке механизмов и новых стандартов управления рисками и реализации финансового контроля. Таким образом, в банковской системе чрезвычайно важно формирование эффективного финансового контроля, что является важнейшим условием выявления рисков и предотвращения их появления в дальнейшем, а также условием плодотворного управления.

Предмет и объект исследования. Объектом исследования являются банковская система РА и коммерческие банки, а предметом – комплекс проблем, существующих в системе финансового контроля.

Цель и задачи исследования. Основной целью работы является выявление основных проблем, возникающих при реализации финансового контроля в банковской системе РА и разработка механизмов и путей для их решения, а также для повышения эффективности финансового контроля. Для достижения этой цели в работе были выдвинуты и решены следующие задачи:

- Исследовать особенности проводимого в банковской системе РА финансового контроля и международный опыт реализации и регулирования финансового контроля в банковской системе и проанализировать текущую

ситуацию финансового контроля в банковской системе РА и ее возможное развитие.

- Выявить проблемы организации и реализации финансового контроля в коммерческих банках и разработать подходы и механизмы для их решения.
- Оценить роль Центрального банка Армении обосновать необходимость новых подходов контроля и разработать направления формирования эффективных систем контроля в банковской системе.

Научная новизна исследования.

- Разработана информационная система индикаторов раннего предупреждения валютных кризисов, которая с внедрением предложенной модели ситуативного макро-стресс тестирования позволит прогнозировать валютные кризисы, снизив риски возможных финансовых потерь банка, также позволит оценить прямые и косвенные воздействия валютных колебаний на деятельность банка.

- В связи со снижением эффективности управления кредитным риском в коммерческих банках, а также с низкой степенью сопротивления банка к рыночным валютным колебаниям для решения основной проблемы продолжительного понижения уровня достаточности капитала в банковской системе РА было предложено законодательно определить буфер сохранения достаточности капитала, целесообразный период времени обеспечения уровня буфера капитала со стороны банка, а также положения, удерживающие и регулирующие распределение доходов, когда норматива ниже буфера.

- В В зависимости от степени концентрации общих обязанностей в банковской системе Республики Армении для повышения эффективности управления рисками было предложено заменить регулирующие экономические нормативы ликвидности стандартом ликвидности, определенным Базельским соглашением, что позволит внедрением эффективных механизмов для снижения рисков обеспечить необходимый уровень ликвидности в банках.

ISSUES OF FINANCIAL CONTROL IN BANKING SYSTEM OF THE REPUBLIC OF  
ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – “Finance, Accounting”

The defense of the thesis will take place on May 26, 2016 at 14<sup>00</sup> o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics. Address: 128, M. Nalbandyan str., Yerevan 0025.

A B S T R A C T

The research is dedicated to the identification of the main problems and issues existing in financial control systems of commercial banks and the banking system of Armenia.

It's very important the presence of stable and effective banking system in the formation and development of financial system RA. The stableness and effectiveness of banking system directly depend on the effectiveness of banks' financial control processes. The financial crisis of 2007- 2009 revealed some major issues of the banking system. Methods and mechanisms used for the regulation and control of banking systems were not enough to prevent financial crisis. This brought the necessity of development of new standards and mechanisms for financial control and risk management. Hence the formation of effectively implemented financial control systems is the key to achieve effective identification of financial risks and their further management.

The object of the research is the banking system of RA and the subjects are financial control systems of banks, issues of financial controls processes and identification of theoretical and practical mechanisms and legal foundations for latter improvements.

The main purpose of the research is to reveal the problems of financial control system of the banking system of RA and explore and develop new methods and mechanisms to solve the identified issues and improve the effectiveness of financial control systems.

For achieving those goals following issues have been introduced and solved in the research

- To explore the features of financial control system of banks and the international experience in this field

- To analyze the current situation and possible developments of financial control systems in the banking system of RA.
- To reveal main issues in the organization and implementation processes of financial control systems and to introduce new methods and mechanism to solve identified issues.
- To evaluate the role of the Central Bank of Armenia and to prove the need of new methods and approaches in the banking supervision field for improvement and better results.

The main scientific novelty of the thesis is as follows

- System of Early Warning Indicators of currency crisis has been developed and introduced which aligned with developing the macro stress testing model will enable banks to foresee currency crisis, reduce possible financial losses and estimate the direct and indirect effects of exchange rate fluctuations on the bank's activities.
- To solve the problem of continuous decline in the level of capital adequacy ratio reasoned by poor credit risk management in the banks and as well as with low level of resistance of banks to the currency crisis, offer was made to solve the issue by introducing conservation buffer of capital adequacy ratio, reasonable period of time to ensure the capital buffer is maintained, as well as provision of several restrictions on the distribution of income when ratio is below the buffer.
- To improve liquidity risk management depending from degree of concentration of banking system's liabilities, it was proposed to replace economical liquidity ratios with Liquidity Management Standard offered within Basel 3 agreement, this will allow to effectively mitigate risks with the introduced adequate mechanisms and will ensure the required level of liquidity in the banks.

The results of the research, and the main outcomes and proposals for improvement of financial control processes of Armenian banking system have been summarized in the conclusion section.

